են թորիչ գործարաններ: Նավթը թորելով ստանում են առանձին-առանձին նյութեր:

Նավթի մեջ պարունակվող այս կամ այն նյութը տարբեր աստիճանի տաքութեան տակ է գոլորշիանում: Հետևապես նավթը տարբեր աստիճանի տաքութեան յենթարկելով, հնարավոր է զտել նրա մեջ պարունակված նյութերն իրարից:

Նավթից ստացվում են հետևյալ նյութերը.

Նավթը մինչև 150° տաքացնելով ստացվում է բենզին, յորի գոլորշիները խողովակներով անցնելով սառցարանի միջով, հեղուկ են դառնում և թափվում են. հատուկ ավազանի մեջ: Բենզինից մաքրելուց հետո նավթը տաքացնում են մինչև 270°, Այս տաքութեան տակ գոլորշիանում է կերոսինը, վոր նույն պես խողովակներով սառցարանի միջով անցնելով խորանում է և հեղուկ դրութեամբ թափվում է մի ուրիշ ավազանի մեջ:

Բենզինը և կերոսինը հեռացնելուց հետո մնում է մազութը: Մազութը 300°-ից բարձր տաքացնելով ստանում ենք յուղեր, յորոնք գործածվում են մեքենաներ յուղելու համար: Յուղերը հեռացնելուց հետո մնում է սև, թանձր, ձյութանման հեղուկ: Այս հեղուկը կոչվում է հուզրոն: Հուզրոնը գործածվում է լառելու կամ վագոնների անիվները յուղելու համար: Հուզրոնը 500° տաքացնելով ստացվում է դեղնավուն գույնի ճարպ — վազելին: Բացի վազելինից, ստացվում են նաև պարաֆին, պայթուցիկ նյութեր և այլն:

Բենզինը մեծ նշանակութիւն ունի արդյունաբերութեան մեջ: Նա գործածվում է յուղեր և ձյութեր լուծելու համար, որինակ՝ բրդերը շատ լավ մաքրվում են բենզինով: Ստանում են զանազան տեսակ յաքեր, լուծելով բենզինի մեջ ձյութերը. բետոնի գործարաններում բենզինի մեջ լուծում են լաուզուկ:

Բենզինը անփոխարինելի վառելանյութ է ավտոմոբիլների և սավառնակների համար: Բենզինի շուտ բռնկվող հատկութիւնը վերին աստիճանի հարմար է այնպիսի շարժիչ մեքենաների համար, վորոնք պետք է շատ մեծ արագութեամբ պտտվեն: Բենզինը ավտոմոբիլի կամ սավառնակի մոտորի գլանում բռնկվելով, առաջացնում է գազեր, վորոնք իրենց առաձգականութեամբ ճնշում են գլանի մեջ հետ ու առաջ շարժում: Հաճախակի բռնկումների շնորհիվ մոդըը հետ ու առաջ շարժվելով շարժում է կրիվոշափի միջոցով անիվները (կրիվոշափը նկատելի է լծակն է, վորը միացած է լինում ստեակի հետ): Կե-

ընդհանուր խոշոր նշանակություն ունի արդյունաբերության մե-
կերը շարժիչ ուժ՝ մեքենաներ բանեցնելու համար: Առանձ-
նապես շատ կերտսին և գործածվում արակտորների համար
վորոնք մշակում են կոլտնտեսությունների և խորհրդատեսու-
թյունների հողերը: Կերտսինը խոշոր չափով գործ է ածվում
նաև լուսավորության և տնային պետքերի համար: Կերտսինը
մաքրում են մեքենաներ և յուղով կեղտոտված իրեր:

Ինչպես և առաջացել նավթը: Նավթի առաջացման խըն-
դիրը շատ շատերին և հետաքրքրել. սակայն դեռ ևս հայտ
նի չեն վորոշ կերպով, թե ինչպես և առաջացել նավթի
գետնի տակ:

Յերկու յենթադրություն կա նավթի ծագման մասին
Առաջին յենթադրությունը պատկանում է ռուս քիմիկոս Մեն-
դելեևիին, վորի կարծիքով նավթն առաջացած պետք է լի-
նի հանքային նյութերից: Զուրը ծծվելով գետնի խորքը
հասնելով ածխածնով հարուստ շիկացած մետաղներին, սաստի-
ճնշման տակ քիմիական փոխադրեցությունների շնորհիվ ա-
ռաջացնում է նավթ:

Յերկուրդ յենթադրությունն անում է գերմանացի գիտ-
նական ենզլերը, վորի կարծիքով նավթն առաջացել է մեռա-
կենդանիների և բույսերի մնացորդներից: Յերկրի մակե-
րևային փոփոխությունների և քայքայման շնորհիվ, գանազա-
տեղերը բարձրացել կամ ցածրացել են՝ իջնելով ջրի տակ
Ահա այդպիսի փոփոխությունների ժամանակ, կենդանիների
մնացորդները ծածկվելով լեռնային տեսակներով, թաղվել են
գետնի տակ: Ողից կտրված լինելով, այդ կենդանիների մնա-
ցորդները յենթադրվել են բարձր ճնշման և քայքայվելով ա-
ռաջացրել են նավթը:

Այս յերկու գիտնականներն ել իրանց յենթադրություն-
ները հաստատել են փորձերով: Ներկայումս գիտնականներ
ավելի հավանական են համարում նավթի ծագումը որգա-
նիզմներից:

Նավթի մեակվան տեղերը Խորհրդային Միության մեջ: Ամե-
նանշանավոր նավթահանքերը գտնվում են Բազու քաղաքի մոտ
վորտեղ բազմաթիվ նավթային աշտարակներ ծածկում է
մերձակա տարածությունները:

Բազվից 18 կերտեար հեռավորության վրա գտնվում
Սուրախանի կոչված տեղը: Այնտեղ մինչև այժմ ել կան կրա-
կապաշտների տաճարի ավերակները: Հնում այստեղ ապրո-
ժողովուրդը պաշտում եր կրակին: Գետնից դուրս յեկող կա-

ղերի վառվելը նրանց մեջ ստեղծել եր առասպելական և մո-
տիապաշտական ավանդություններ: Նրանց տաճարում կրակը
միշտ անշեջ պահպանվում եր իբրև սրբություն: Դեռ սրա-
նից 45 տարի առաջ է մեռել վերջին քուրմը, վորը քարոզում
եր խավար ժողովուրդին սուտ և անհեթեթ ավանդություններ:
Այժմ գիտություն լույսն է տարածվում այնտեղ, և տեխնիկայի
կատարելագործված միջոցներն ոգտագործում են վառվող կա-
ղերն ու հեղուկները սոցիալիստական շինարարության գործին:

Նավթարդյունահանությունը Բազվի նավթահանքերից
արագ տեմպերով աճում է: 1927/28 թվին տարեկան մշակվել
է 7574 հազար տոնն. այս թիվը 1931 թվին համարյա թե
կրկնապատկվել և հասել է 15214 հազար տոննի: Հնգամ-
յակի վերջում տարեկան մշակությունը պետք է հասնի 20000
հազար տոննի:

Հյուսիսային Կովկասում նավթի խոշոր հանքեր գտնվում
են Գրոգնիյի և Մայկոպ քաղաքների մոտ: Մայկոպի նավթի
մեջ պարունակվում է լավ տեսակի բենզին, վոր գործածվում
է սավառնակների համար: Տարեկան արդյունահանությունը
1927/28 թվին յեղել է բնդամենը 3682 հազար տոնն. իսկ
1932 թվին պիտի հասնի 11 միլիոն տոննի, վորից 2 միլիոն
տոնը պիտի ստացվի Մայկոպից:

Նավթահանքեր գտնվում են նաև Կասպից ծովի հյուսիս-
արևելյան կողմում Նմբե գետի ափին: Նավթահանքերով հա-
րուստ է Կասպից ծովից դեպի արևելք գտնվող Ուզբեկիս-
տանը, վորտեղից ստացված նավթն իր բաղադրությամբ նման
է ամերիկական նավթին և պարունակում է մեծ քանակու-
թյամբ բենզին և կերտսին:

Նավթահանքեր կան նույնպես Ուրալում և Թուրքմենստա-
նում, Մախալին կղզու վրա և Դադստանում:

Նավթի պառարը ճիշտ կերպով չի կարելի վորոշել:
Սակայն չնայած այն դժվարություններին, վորոնք խանգա-
րում են նավթի պաշարը վորոշելու, այնուամենայնիվ նավթի
համաշխարհային պաշարը հաշվում են մոտ 8000 միլիոն տոնն:
Նավթի այս պաշարից 37,4% (2874 միլ. տոնն) ՈւՍՇՄ-ում,
16% (1230 միլ. տոնն) Հարավային Ամերիկայում, 12% (930 միլ. տոնն)
Հյուսիսային Ամերիկայի Միացիալ Նահանգ-
ներում, իսկ մնացած 34,6% գտնվում է մնացած պետություն-
ների մեջ:

Այս թվերը ցույց են տալիս, վոր Խորհրդային Միու-
թյունը նավթի պաշարով բռնում է ամբողջ աշխարհում առա-

Ղին տեղը. իսկ արդյունահանությամբ յերկրորդ տեղը Հյուսիսային Ամերիկայից հետո: Սակայն նավթարդյունաբերության որ ըստ որե զարգացումը և նավթի անսպառ պաշարն պայացուցում են, վոր շուտով նավթի արդյունահանության քանակը կհասնի և կանցնի Ամերիկականից, վորտեղ նավթի պաշարը սպառվելու նախորդակին ե գտնվում: Հրոհիվ գիշատիչ շահագործման:

Հետևյալ թվերը համոզում են մեզ նավթարդյունահանության չտեսնված տեմպերի աճումը. 1913 թվին արտադրվել ե տարեկան 9,2 միլ. տոնն, 1931 թվին 22,3 միլ. տոնն, իսկ 1932 թվին, հնգամյակի ավարտական տարում տարեկան արդյունահանությունը պետք ե հասնի 26,4 միլ. տոննի:

Նավթարդյունահանության արագ զարգացումը թույլ տալիս ծրագրի յերկրորդ հնգամյակի վերջում նավթի արտադրությունը հասցնել 80—90 միլ. տոննի:

Նավթի տեղափոխությունը կատարվում ե սովորաբար յերկաթուղային և ջրային ճանապարհներով, առանձին վագոններով, վորոնք կոչվում են ցիստերններ, կամ նավթատար շոգենավերով: Սակայն ավելի շուտ և ձեռնառու կերպով նավթը տեղափոխում են մի քաղաքից մյուսը նավթատար խողովակներով: Նավթատար խողովակները մետաղյա խողովակներ են, վորոնց միջով նավթը հոսում ե ժամը 45 կիլոմետր արագությամբ:

Նավթի տեղափոխությունը նավթատար խողովակներով յերեք անգամ եժան ե նստում, քան յերկաթուղային ճանապարհով:

Սյդպիսի նավթատար խողովակներ անց են կացված Բազվից մինչև Բաթում, վորոնց միջոցով տարեկան տեղափոխվում ե 1640 հազար տոնն նավթ: Հյուսիսային Կովկասում նավթատար խողովակներ անց են կացրած Գրոգնից մինչև Տուափուս: Ծրագրված ե նույնպես նավթատար խողովակներ անցկացնել Գրոգնիցից դեպի Ուկրաինա և Արմավիրից դեպի Լիսկի կայարանը: Յեթե Մայկոպի շրջակայքում կատարվող հետազոտությունները հայանաբերեն նավթի խոշոր պաշար նավթատար խողովակը պետք ե շարունակվի մինչև Մոսկվա:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԻՑ ԼԱՐԵՆՔ ՈՒԺԵՐԸ
ՅԵՎ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ ՎՈՉ ՄԻ ԹՈՒՅԼ ԶՈՒՆԵՆԱՆՔ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՐ ԱՄԵՆԱՎՏԱՆԳԱՎՈՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

— Ի՞նչ ե պատահել մեր Սուրիկին, նա յերեկ այնպես լավ եր, ուրախ, ժիւր ու կայտառ, ամբողջ որը խաղում եր, կատակներ անում, իսկ այսօր բոլորովին փոխվել ե, ամբողջովին թուլացած նա պառկել ե անկողնում ու դողում ե ամբողջ մարմնով, ճնշում ե արագ-արագ, դեմքը կարմրած ե, իսկ մարմինը տաքացած՝ կարծես ներսում մի վառարան ե վառվում: Չկա նրա յերեկվա ուրախությունը, պարզ նկատելի յե, վոր նա տանջվում ե ինչ վոր ցավից: Ի՞նչ պատահեց, ինչո՞ւ յերեկվա մեր առույգ ու կայտառ, թուփուռ ու ժպտուն Սուրիկը չի կարողանում անկողնից վեր կենալ, տաքություն մեջ տնջում ե ու հովում: Ի՞նչպես բացատրել այդ փոփոխությունը, ինչո՞ւ հիվանդացավ մեր սիրելի Սուրիկը:

— Աստված ուզարկեց այդ հիվանդությունը մեր մեղքերի համար, — ասում ե տատիկը. — պետք ե կանչել տերտերին, վոր ազոթը կարդա, որհնած ջուր խմեցնի և սառնանքներին ու չար վոգիներին՝ դուրս հանե Սուրիկի միջից:

— Վոչ, — ասում ե պիոներ Վահանը, — սխալվում ես դու, տատիկ, հիվանդությունները մեծ մասամբ առաջանում են միկրոբներից, մեր ամենավտանգավոր թշնամիները միկրոբներն են, վոչ աստված և վոչ ել սառնանքներ: Միկրոբներն են, վոր մտել են մեր Սուրիկի մեջ և առաջացրել այս հիվանդությունը. պետք ե կանչել վոչ թե տերտերին, տիրացույին կամ թե գրքացին, այլ բժշկին, վորովհետեւ նա միայն կարող ե վորոշել, թե ինչ միկրոբների պատճառով ե առաջացել այդ հիվանդությունը և ինչպես կարելի յե նրանց դեմ պայքարել ու առողջացնել Սուրիկին: Յես իսկույն կկանչեմ բժշկին և հետո կբացադրեմ քեզ, թե ինչ ե միկրոբը:

Ի՞նչ ե ՄԻԿՐՈԲԸ

Բժշկի գնալուց հետո Վահանը սկսեց պատմել տատիկին միկրոբների մասին:

— Դեհ այժմ լսիր, սիրելի տատիկ, թե ո՞վքեր են մեղավոր մեր Սուրիկի հիվանդության մեջ: Անցյալ որ մեր ուսուցչի ղեկավարությամբ մենք գնացինք եկսկուրսիա դեպի տեղական բուժարան: Բժիշկը մեզ ընդունեց շատ սիրով, նա մեզ մանրամասն բացատրեց, թե ինչպես հիվանդություններն առաջանում են միկրոբներից:

Իրանք չափազանց փոքր, հասարակ աչքերով անտեսանելի կենդանիներ են: Միկրոօրգանիզմները մտնելով մեր մարմնի մեջ ստամոքսի, աղիքների, թոքերի և ուրիշ գործարանների մեջ առաջացնում են վերքեր և թունավորում են արյունը: Բժիշկը մեզ ցույց տվեց այդ փոքրիկ կենդանիներին մի գործիքի միջոցով, վորը կոչվում է միկրոսկոպ: Նա մի կաթիլ ջուր կաթեցրեց ապակու վրա, դրեց միկրոսկոպի խողովակի տակ և առաջարկեց մեզ հերթով նայել խողովակի միջոց: Յեվ ի՞նչ ենք տեսնում, ջրի կաթիլը, վոր հասարակ աչքով թվում էր բոլորովին մաքուր, լցված էր բազմաթիվ մանր կենդանիներով: Դրանք հենց միկրոօրգանիզմն էին, վորոնք անընդհատ շարժվում էին այս ու այն կողմ:

Միկրոսկոպը նրանց մեծացնում է 2—3 հազար անգամ, վորի շնորհիվ ել մենք կարողանում ենք տեսնել:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՄՏՆՈՒՄ ՄԻԿՐՈՐԵՆԵՐԸ ՄԵՐ ՄԱՐՄՆԻ ՄԵՁ

Միկրոօրգանիզմներ կան համարյա ամեն տեղ՝ հում ջրի մեջ, ուղում, բոլոր առարկաների վրա: Յերբ մենք հում ջուր ենք համում, պտուղներ ուտում ենք առանց յեռացած ջրով ողողելու, ճաշի նստելուց առաջ ձեռները չենք լվանում, այդ միկրոօրգանիզմները ջրի և կամ կերածի հետ մտնում են մեր մարմնի մեջ: Զիշտ այսպես են տարածվում խոլերան, վորովայնի տիֆը, փորհարիքը և ուրիշ հիվանդություններ:

Յեթե ջուրը յեռացնենք, միկրոօրգանիզմներ չեն կարողանում դիմանալ տաքության բարձր աստիճանին և մեռնում են: Ահա թե ինչու համար պետք է յեռացնած ջուր խմել:

Այդպիսի միկրոօրգանիզմներ կան նաև ողի մեջ, բայց գլխավորապես փոշու ողի մեջ, վորովհետև նրանք նստած են լինում փոշու վրա: Յերբ մենք ներշնչում ենք այդ կեղտոտ ողը, փոշին իր հետ տանում է միկրոօրգանիզմները դեպի թոքերը և այնտեղ առաջացնում զանազան հիվանդություններ, որինակ՝ թոքախտը:

Սակայն ամենից ավելի միկրոօրգանիզմները տարածվում են զանազան կենդանիների միջոցով: Որինակ՝ վոշիլը, լուն, փայտոշիլը վոշ միայն մեզ անհանգստացնում են կծելով և ցավ պատճառելով, այլ և տարածում են զանազան հիվանդություններ: Բժավոր տիֆի տարածողն է վոշիլը, լվերի միջոցով տարածվում է ժանտախտը, վոր մի սարսափելի հիվանդություն է. փայտոշիլների միջոցով նույնպես տարածվում են մի շարք հիվանդություններ՝ տիֆ, ժանտախտ և այլն:

Այդ պարագիտները կծելով այս հիվանդություններով առապող մի մարդու, ծծում են նրա արյունը: Հիվանդի արան մեջ գտնվում են բազմաթիվ միկրոօրգանիզմներ, վորոնց վոշիլը ամ լուն բաց են թողնում, յերբ կծում են մի առողջ մարդու արմինը և այսպիսով հիվանդացնում նրան:

Այս նույն ձևով է տարածվում նաև մալարիա հիվանդությունը: Սակայն այս անգամ միկրոօրգանիզմները տարածողն է ռծակը, վոր հիվանդին կծելուց հետո կծում է մի ուրիշին և րա արյան մեջ թողնում հիվանդից ստացած մալարիայի միկրոօրգանիզմներ:


Պակաս վնաս չի հասցնում մեզ առև ճանճը, վորպես հիվանդության միկրոօրգանիզմներ տարածող:

Ուր ասես չեն լինում նրանք, ի՞նչ կեղտոտություն վրա ասես չեն նստում, սղբանոցի փոած կեղտոտությունների վրայից թռչում են նրանք սատկած կենդանու դիակի վրա, այնտեղից արտաքինոց և վերջը գալիս նստում հացի, աքարի, ճաշի սեղանի վրա դրած առանների, գդալի վրա: Աղբանոցի կեղտոտությունների և դիակների վրա ափազանց շատ կան միկրոօրգանիզմներ, նրանք այնտեղ իրենց համար սնունդ են լսնում և արագ բազմանում: Ծանճը ստելով այդ կեղտոտությունների վրա, վերցնում է իր թաթերի վրա բազմաթիվ միկրոօրգանիզմներ և տարածում ամեն տեղ:

Ծանճերի միջոցով տարածվում են բազմաթիվ հիվանդություններ, որինակ՝ վորովայնի տիֆ, խոլերա, փորհարիքը և այլն, վորոնք իբրեւմ հազարավոր մարդկանց մահվան պատճառ են դառնում:

ԻՆՉՊԵՍ ՊՍՅՔԱՐԵՆՔ ՄԻԿՐՈՐԵՆԵՐ ՏԱՐԱԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ
— Բժիշկը մեզ սովորեցրեց նաև, թե ինչպես պետք է լուխնացնենք միկրոօրգանիզմներ և պայքարենք նրանց տարածողների դեմ:

Նա ասաց, վոր ջրի մեջի միկրոօրգանիզմներ հալար, պետք է յեռացնել ջուրը: Ողբ պետք է մաքրել փոշուց: Բնակարանների և դասարանների հատակը հաճախ մաքրելով և



Միկրոսկոպ

հատուկ յուր քսելով, ողի մեջ թափառող միկրոբները կնստան հատակին և ողը կմաքրվի:

Միկրոբների վրա մահացու ազդեցութիւնն ունեն նաև ա-
րևի ճառագայթները: Լուսավոր, արևոտ սենյակում ավելի քիչ
միկրոբներ կան, քան խոնավ ու մութ սենյակում: Ուրեմն հա-
ճախ պետք է սենյակի ողջ մաքրել՝ պատուհանները բաց անե-
լով և արևի ճառագայթների մուտքը չխանգարելով:

Սակայն ավելի կատարյալ և կազմակերպված պայքար պետք է մղել այն միջառնների դեմ, վերոնշյալ տարածում են հանազան հիվանդություններ—վոջլի, լուի, փայտոջլի, մոծակի և ճանճերի դեմ:

Վոյիլնեմ, ինչպես գիտենք, ապրում են ճերմակեղեններ
 րի վրա և գլխի մագերի մեջ: Նրանք շատ արագ բազմանում
 են. մի ամսից վոյիլը կարող է 4000-ից ավելի սերունդ տալ:
 Նրանք ածում են ձուեր, վորոնք կոչվում են անիծ: Անիծնե-
 րը կպած են լինում մագերին, հասարակ աչքով նրանք կարե-
 լի չեն տեսնել:

Վոջլից ու անիծից ազատվելը շատ հեշտ է: Ճերմակեղենը պետք է լվալ ու յեռացնել: Իսկ գլխի վոջլիներին վոջնչացնելու համար գիշերը, քնելուց առաջ, գլուխը պետք է ոծել կերտսինի և արևածաղկի յուղի խառնուրդով և կապել: Առավոտյան խիտ սառնով սառնելիս քոյր անիծներն ու վոջլիները կհեռացվեն առանց դժվարության:

Լուերը սիրում են փոշոտ բնակարաններ, նրանք իրենց
 ձվերն ածում են հատակի փոշոտ ճեղքերում, փոշոտ
 մեջ: Հետևաբար լուերի զեն պայքարը պետք է մղել
 նեղով այդ փոշոտ բները:

Համեմատաբար ավելի զժվար ե կովել փայտօջիների զեմ
Նրանք չեն վախենում մոչ ցրտից և մոչ ել քաղցածութունից
և կարող են առանց ուտելու դիմանալ մինչև կես տարի: Վո-
չնչացնելու համար պետք ե մաքրել մահճակալները, լեռացած
ջրով լվալ և կերոսին քսել, պատի ճեղքերն ել կավով ծեփե-
լ և սպիտակացնել:

Մոծակներն ածում են իրենց ձվերը ճահիճների մեջ: Մալարիա հիվանդութունը տարածված է այն աեղերում, վորտե՛ր ճահիճներ շատ կան: Ուրեմն, վորպեսզի մոծակները չշատանան պետք է չորացնել ճահիճները և բակերում, փողոցներում կեղտոտ ջրեր չթափել:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱՆՔԻ ՎԵՐԱԳՐՈՒՄԸ

Համոզման համար պատշաճ է տալ մի քանի ձևերով։ Ամառը պետք է պատուհանները բաց թողնել, իսկ վր

պեսզի ճանճերը ներս չմտնեն, պետք է յերկաթե ցանցով և
կամ բարակ շղաքշով պատել: Սենյակում սեղանների վրա
պետք է դնել ճանճասպան հեղուկով ամաններ և կամ կաշուն
թղթեր, վորպեսզի վոչ մի ճանճ չլինի բնակարանում և միկ-
րորենբով չհեղտոտեն մեր հացն ու շաքարը: Ուսուցիչը մեզ
սեփորեցրեց նաև ճանճորսներ պատրաստել:—մի հասարակ շշի
մեջ պետք է լցնել մինչև կեսը ջուր. շշի անցքի մօտ, ներսի
կողմից մի քիչ ցած պետք է քսել մեղր կամ շաքարի լու-
ծույթ, ճանճերը ներս կգնան մեղրն ուտելու համար և դուրս
չեն կարող գալ: Ինչնենք ջրի մեջ և կխեղդվեն:

—Սհա, այսպես, սիրելի տատիկ, պետք է ժոհնաջանել միկ-
րոջներին, պետք է ժոհնաջանել այդ միկրոջները տարածողնե-
րին, այն ժամանակ մարդիկ կազատվեն իրեն ամենավտանգա-
ված միջավայրից և շատ հիմադրույթուններով:

—Բայց գիտե՞ս, տատիկ, վոր հեղափոխությունից առաջ մեր յերկրում և այժմ ել արտասահմանում կապիտալիստներն ու կալվածատերերը նույնպես նպաստում են միկրոբների ու հիվանդությունների տարածմանը։ Դու գարմանո՞ւմ ես։ Բայց դա ճիշտ է։ Ձե՛ք վոր նրանք աշխատում են, վորքան կարելի դա ճիշտ է։ Չէ՜ վոր նրանք աշխատում են, վորքան կարելի լինում միայն չոր հաց տալիս, վորով շատ անգամ կարող են մոլթ ու խաբխուլ հյուղե-
զներ։ Աշխատավորներն ապրում են մոլթ ու խաբխուլ հյուղե-
րում, փոքրիկ սենյակներում, կիսաքանդ, կեղտոտ ու նեղլիկ
քնակարաններում, վորտեղ մաքուր ոդ, մաքուր ջուր և արև
չկ'ա՛ծ։ Նրանք վատ են մնվում, ուժասպառ են լի-
շատ քիչ և լինում։ Նրանք վատ են մնվում, ուժասպառ են լի-
շատ քիչ և լինում։ Նրանք վատ են մնվում, ուժասպառ են լի-

... և ...

Վճարելի:
Խորհրդային իշխանությունը բանվորների համար շինում
է նոր ու շատ հարմարություններ ունեցող տներ, նույնիսկ
քաղաքներ, ամառանոցներ, բարեխափում է աշխատավորության
դրությունը և այդպիսով վարակիչ հիվանդությունների դեմ
կռվում:

ՀԱՐՑԵՐ 1. Ի՞նչպէս են առաջանում վարակիչ հիվանդութիւնները: 2. Ի՞նչ գործիքի միջոցով կարելի յետ միկրոօրգանիսն տեսնել: 3. Ի՞նչու համար պետք է խմել յեռացած ջուր և ձեռներն ուտելուց առաջ լվանալ: 4. Ի՞նչպէս են տարածվում միկրոօրգանիսները: 5. Ի՞նչ պետք է անել հիվանդութիւններից ազատվելու համար: 6. Ի՞նչու հիվանդանալու դեպքում պետք է բժշկին դիմել: 7. Ի՞նչ պետք է անել տան և դպրոցի մաքրութեան համար: 8. Սորերդային իշխանութիւնն ի՞նչպէս է կազմում վարակիչ հիվանդութիւնների դեմ:

ԻՆՉՊԵՍ Ե ՏՊՎՈՒՍ «ՈՒՍՄԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆԸ»

Մեր ուրախութեանը չափ չկար: Վերջապէս, պիտի տեսնէինք այն տպարանը, վորտեղ տպվում է մեր սիրելի «Ուսման հարվածայինը»: Այդ մասին հայտարարեց ուսուցչուհի ընկ. Ոկտաբերինա Սուրենյանը:—

— Վաղը կգնանք տպարանը դիտելու:

Հետևյալ օրը վորոշված ժամին բոլորս հավաքվեցինք և սպասում էինք ուսուցչուհու: Յեկապէս Մենք կանգնեցինք գույգ-գույգ և կարմիր բանակայինների պէս համաչափ բայելով դնացինք դեպի սպարան:

Մենք քայլում էինք ենգելի փողոցով, վոր Հյուսիսային կովկասի մայրաքաղաքի—Ռոստովի գլխավոր փողոցն է: Կանգ առանք մի մեծ, յերկհարկանի շենքի առջև:

— Ձեր անցածութիւնը—ասաց դռնապահը:

Ընկ. Սուրենյանը ինչ-վոր թուղթ ցույց տվեց: Մենք մտանք տպարանի բակը, հետո շենքը: Մեր առաջ բացվեց մի շատ հետաքրքրական տեսարան:

Շարե շար կանգնած էին տասնյակ մեքենաներ: Նրանք հաճելի աղմկում էին: Այստեղ ու այնտեղ յերևում էին մեծ, լայն թղթերի անագին կույտեր: Բանվորներն ու բանվորուհիները զվարթ ու վողկորված աշխատում էին: Մեկը մեքենայի վրա յեր աշխատում, մյուսը թուղթ էր տեղափոխում, յերկու հոգի զգուշ տեղափոխում էին մի մեծ, սև տախտակ, վորի վրա գրված էին գրքի յերեսի մեծութեամբ ու նրա ձևով ինչ-վոր բաներ:

— Այդ «Ուսման հարվածայինն» է, տանում են տպելու—ասաց ընկեր Տեր-Դավթյանը—տպաւանի հայկական բաժնի գրաշարապետը, վորը մեզ բացատրութիւններ էր տալիս:

Մենք անցանք հայկական գրաշարանոցը, վորտեղ նշպէս ասաց ընկեր Տեր-Դավթյանը, շարվում են «Ուսման հարվածայինը» և ուրիշ շատ գրքեր:

Մեծ, ընդարձակ սենյակում դրված էին բազմաթիւ սարոցներ: Նրանց առջև կանգնած էին բանվորներն ու բանվորուհիները և շարում էին:

Ընկ. Տեր-Դավթյանը շարունակում էր իր բացատրութիւնները:

— Ուսման հարվածայինն ստանում է հոդվածներ ու նյութեր և աշխատակիցներից և թղթակիցներից: Կարող է, ուղղում ուղարկում է տպարանը: Այնտեղ նյութերն ստանում է ապագա գրաշարը և բաժանում շարելու համար: Նայեցեք թե նշպէս են շարում:

Սարքոցի վրա դրված էին քառակուսի տախտակներ, վորոնց վրա կային սուրճապէս քառակուսի, տախտակի մեջ փռած փոքրիկ արկղիկներ: Արկղիկները լիքն էին մետաղյա առեւրով:

Կարելի՞ յետ մի տառ նայել—հարցրի յես գրաշարին:

— Խնդրեմ, նայիր և դիւր այն արկղը, վորտեղից կվերցնես ժպտալով ասով գրաշարը:

Վերցրի ու նայեցի: Բարակ ու յերկար մետաղի ծայրին տեսա «մ» տառը:

Գրաշարը ձախ ձեռքով բռնել էր տառակալը (վերստան), իսկ աջ ձեռքով արագ-արագ արկղիկներից վերցնում էր առեւրը և շարում տառակալի վրա: Այնպէս արագ, վոր չեմ արող ասել:


— Գրաշարը—շարունակեց ընկեր Տեր-Դավթյանը,—տառերից շարում է բառեր, բառերից—տողեր, իսկ տողերից սյունյակներ են ստացվում:

— Իսկ ի՞նչպէս են ստացվում գրքի յերեսները—հարցեց տղաներից մեկը—Գուրգենը:

Ընկ. Տեր-Դավթյանը մեզ առաջնորդեց գրաշարանոցի մյուս ողմբ: Այնտեղ դրված էր մի մեծ յերկաթյա սեղան: Սեղանի առջև կանգնած էր մի գրաշար: Նա զգուշութեամբ մաս-մաս վերցնում էր մեզ արդեն ծանոթ սյունյակները և հավասարաւորեցնում էր մեզ արդեն ծանոթ թուղթ կապում: Նայում եմ, ափ դարսում ու կողքից բարակ թուղթ յերեսներ, միայն գլխիվայր:

— Նշ տեսնեմ. իսկ և իսկ գրքի յերեսներ, միայն գլխիվայր:— Ահա այսպէս են կապում «Ուսման հարվածայինի» և յուս գրքերի յերեսները—ասաց ընկ. Տեր-Դավթյանը: Հիմա նայեցեք, թե ինչ են անում այդ յերեսների հետ:

Բանվորներին մեկը վերցնում եր կապած յերեսները, տանում եր մի փոքրիկ սարքոցի վրա, վրան թուղթ եր դնում, յերեսների վրայով անց եր կացնում սարքոցի կտր—գլանաձև մասը: Դուրս ելին գալիս տպված յերեսներ:



Գրաշարայես ընկ. Հովանես Տեր-Դավթյան

— Այդ յերեսները հանվում են սրբագրելու համար—ասաց ընկեր Տեր-Դավթյանը.—սյունյակները նույնպես հանվում են սրբագրելու համար: Առաջ սրբագրվում են սյունյակները, հետո յերեսները: Սրբագրիչը կարդում ե, ուղղում սխալները, գրաշարներն ել այդ ուղղումները մտցնում են շարվածքի մեջ: Յերբ բոլոր սխալներն ուղղված են, գիրքը պատրաստ ե տպագրության համար:

— Լավ, հապա վճնց ե լինում, վոր «Ուսման-Հարվածային»-ի մեջ նկարներ են տպում—հարցրեց տղաներից մեկը —Վազգենը:

— Հարցը շատ տեղին ե,—պատասխանեց ընկ. Տեր-Դավթյանը,—մենք պետք ե նաև գնանք տեսնենք տպարանի հենց այն բաժանմունքը, վորտեղ պատրաստում են նկարները—ցիկլոգրաֆիան:

Մենք անցանք շինքի մյուս մասը, բարձրացանք յերկրորդ հարկը և ներս մտանք մի շատ հետաքրքիր շինք, վորը բաղկացած եր հինգ սենյակից: Չորս կողմը—ղանազան սարքոց


ներ, մեքենաներ, վառվող պրիմուսներ, ցինկի կտորներ և այլն և այլն:

— Հիմա լսեք, ինչպես են ստացվում նկարը, ասաց ընկ. Տեր-Դավթյանը: Ցինկոգրաֆիայի լուսանկարչատանը հանվում ե հարկավոր պատկերը: Վերջինս քիմիական միջոցներով տեղափոխվում ե ցինկի տափակ կտորների վրա: Դա արվում ե այնպես, վոր ցինկի վրա նկարը լինի գլխավայր, վորպեսզի տպվելիս շիտակ դուրս գա: Յերբ արդեն ցինկի կտորը պատրաստ ե, նրան մեխերով խփում են տախտակների վրա, կողքերից կտրում, հարթում են և ստացվում ե կլիշե: Կլիշեյի բարձրությունը պետք ե պակաս լինի տառերի բարձրությունից: Ներքին յերեսները կապելու ժամանակ այդ կլիշեները դրվում են համապատասխան յերեսներում և այդպիսով տպվում են նկարները:

Մենք դիտեցինք ամբողջ ցինկոգրաֆիան, բանվորների աշխատանքը: Այնքան հետաքրքիր եր, վոր չեյինք ուղղում հեռանալ, բայց ուսուցչուհին ասաց.—

— Հիմա գնանք տեսնենք, թե ինչպես ե տպվում «Ուսման հարվածային»:

Բոլորս անցանք սեփնալական բաժինը: Շրջապատեցինք մի մեքենա, վորն աշխատում եր թեթե, համաչափ աղմուկով:



Ի՞նչ հիանալի տեսարան լեր: Հսկա մեքենան գործում եր արագ, տալով ընդամենը մի 4—5 վայրկյանում 16 յերես «Ուսման հարվածային»-ից: Այդ հսկա մեքենայի վրա միայն մի բանվոր եր աշխատում, վորի գործն այն եր, վոր մե-

քենայի վրա դարձած թղթերից մի-մի թերթ ներքև ե տալիս:

Ելեկտրականության ուժով արագ պտտվում եր մեքենայի մեծ անիվը: Նրանից պտտվում, շարժվում եյին անթիվ անհամար մասերը: Նայում ես, նայում ու չես կշտանում: Տպված թերթերը դուրս եր գալիս մեքենայի միջից, ընկնում եր բարակ, հավասարաչափ ատամներով ինչ-վոր մասի վրա վերջինս վերցնում եր թերթերն ու կանոնավոր դարձում համապատասխան տեղում: Մենք շարունակում եյինք հետաքրքրությամբ դիտել:

Ընկ. Տեր-Դավթյանը ասաց.—

Ինչպես տեսնում եք, տպվելուց հետո դեռ գրքը պատրաստ չե: Դեռ պետք ե տպված թերթերը տեղափոխել կազմաւուն, ախտեղ դասավորել նրանց, կազմել, կարելի յե այլն, փորից հետո միայն «Ուսման հարվածայինը» պատրաստ կլինի:

Մենք դիտեցինք նաև կազմատունը, տեսանք թե ինչպե բանվորուհիները ծալում եյին թերթերը, կարում, շապի հագցնում և տալիս եյին պատրաստի գրքեր:

Մեծ տպավորություններով և գոհ սրտով մենք հեռացան տպարանից:

ՀԱՐՑԵՐ.— Տպարանը վորակից ե ստանում գրքի նյութեր, ինչպես և շարունակ գրաշարը: Շարելուց հետո մինչև տպվելն ի՞նչ կատարվում: Ի՞նչ դիտեք տպագրական մեքենայի մասին:

ԿԱՏԱՐԵՆՔ ԴՊՐՈՑԻ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԸ՝ ԶԲԱՑԱԿԱՅԵՆՔ, ԶՈՒՇԱՆԱՆՔ, ԳԻՏԱԿԻՑ, ԿԱՐԳԱՊԱՇ ԼԻՆԵՆՔ, ՈՒՍՈՒՄ-ՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԼՐԻՎ ԿԱՏԱՐԵՆՔ

ՈՂԱՊԱՐԻԿՆԵՐ


Յառաքից և ջրից հետո ուղը հաղորդակցության յերրոր միջավայրն ե: «Ողին հաղթելը», «ողին տիրանալը» այժ տեխնիկայի հրատապ խնդիրներից մեկն ե:

Խորհրդային Միությանն ողագնացության մեջ մեծ նվաճումներ ունի: Բացի սավառնակներից, մենք շուտով գերիժաբներ ել կունենանք:

Մեր ողային նավատորմիդն ուժեղացնելով, մենք սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը:

զացումն ել ավելի կարագացնենք և մեր յերկրի «ողային սահմանները» կպաշտպանենք թշնամու հարձակումներից:

Մարդու ողի մեջ բարձրանալու միաբը շատ հին ե: Դեռ շատ հին ժամանակներ մարդիկ փորձեր եյին անում, ողում թռչելու: Շինում եյին «աղափներ», վորոնք մեխանիկական հարմարանքների ոգնությունը թռչում եյին ողում: Պատրաստում եյին ողապարիկներ, վորոնց միջից հանում եյին ողը: Զինաստանում թռցնում եյին տաքացրած ողով լցված վիշապներ, ոձեր: Յեվ միայն 1783 թվականից սկսած Ֆրանսիայում, յերբ Մոնգոլֆյե յեղբայրները հնարեցին իրենց ողապարիկը հրապարակորեն կատարվեցին ողի մեջ տաքացրած ողի ոգտագործման միջոցով բարձրանալու փորձերը: Ողապարիկն իր հնարողների անունով կոչվում ե՝ «Մոնգոլֆյեր»:



Ողապարիկ

Ողագնացությանը սկսեցին հետաքրքրվել վոչ միայն Ֆրանսիայում, այլ և Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում: Ֆիզիկոս պրոֆեսոր Շարլը հնարեց կերպասի մեջ գազ չանցկացնող հատուկ լակ:

Առաջ յեկան Շարլյեր ողապարիկները (պրոֆ. Շարլի անունով կոչվող), վորոնք քիչ փոփոխություններով շինվում են և մինչև այժմ:


Այժմյան ողային նավատորմիդը բաժանվում ե յերկու մասի՝ ողից ծանր (սավառնակներ) և ողից թեթև (ողապարիկներ):

Ողագնացության թեթև տպարատները բաժանվում են յերեք տեսակի՝

1. Գնդաձև ողապարիկ,
2. Ոձաձև
3. Դիրիժաբլ:

Ահա Մոնգոլֆյերի գնդաձև ողապարիկի համառոտ պատմությունը:

Փորձենք շինել ամենահասարակ ձևի մոդել և, դաշտ կամ մարզապետին դուրս գալով, բաց թողնենք նրան:



- A. ՀԱՍՏ ԹՂԹԻՑ ՈՂ.
B. ՏԱՔԱՑՎԱԾ ՈՂ.
C. ԱՆՏԱԿ ԴՈՅԼ
D. ԿՐԱԿ

«Մոնգոլֆյեր»-ի ավիո-մոդել

ԻՆՁ Ե ՊՍԷՍԷՉՎՈՒՄ «ՄՈՆԳՈԼՖԵՐ» ՇԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ


ԳՈՐԾԻՔՆԵՐ. 1. Քանոն՝ միլիմետրային բաժանումներով, 2. Մեկրատ, 3. Մեկրատ, 4. Վրձիկներ՝ ստիճակներով համար:

ՆՅՈՒԹ. 1. Գունավոր բարակ (ծխախոտի) թուղթ. 2. Հասարակ թուղթ կամ սովորական թուղթ կապալարելու համար, 3. Հին թերթեր՝ սակից կպցնելու համար, 4. Ալյուր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Գունդը շինվում է ծխախոտի գունավոր թղթի միասին վառար շերտեր կպցնելով: Նկարի վրա զրված է յերկու մետր արամագծով գնդի ձևը: Այսպիսի շերտեր պետք է կտրել 12 հատ—ամեն մեկը չափից 5-ական միլիմետր ավելի:

Ամենից առաջ հաստ թղթի կամ սովորական թղթի վրա գծել ճիշտ գծագիրը, կտրել այդ գծագրով ձևը և գնելով ծխախոտի թղթի վրա կտրել 12 շերտ: Նախ քան ձևելը, պետք է ծխախոտի թղթի առանձին թերթերն իրար կպցնել: Յերբ թերթերը պատրաստ են, կտրել միանգամից բոլոր շերտերը, 5-ական միլիմետր ավելի թողնելով կպցնելու համար:



Մոնգոլֆյեր ավիոմոդելի շինելու համար շերտեր ձեվելու գծագիր

Բոլոր թերթերը սկզբից կպցվում են յերկուական, ապա 4-ական հատ և այլն (ստանում են մակույկների ձև):

Յեթե գունդը մեծ չափի յե, պետք է ամրություն համար կպցված միացման տեղերի վրա թղթի նեղ շերտ կպցնել: Այդ շերտը պետք է կպցվի և գոտիներ կազմելու համար (գլուխի գուլպաներով):

Գունդը ներքևից ունենենալու յե մի անցք՝ տաք ոգով լցնելու համար: Վորպեսզի բաց թողնելու ժամանակ անցքի կողքերը չճզվեն, պետք է հաստ թղթից ող պատրաստել: Վե-րևից ամրություն համար նույնպես ծխախոտի շրջանաձև թուղթ կպցնել: Գունդը պահվում է ծալած դրուժյամբ՝ մինչև բաց թողնելը:

ԳՆԴԻ ԲԱՅ ԹՈՂՆԵԼԸ

Գունդը տաքացնելիս և տաք ոգով լցնելիս մեծ դժուշու-թյուն է պահանջվում: Առանց մեծերի ոգնություն ավելի լավ գունդը չչորացնել և բաց չթողնել: Մեծ ընկերը (յեղբայրը, հայրը, կուվարը, ուսուցիչը) կոպենն ձեզ և այն խաղում, վորը ղեկավարելու յե ժուրնալ-դասագրքիս հետևյալ համարում:

Ճյուղերով, տաշեղներով, անպետք թղթով վառվող խա-ղույկի կրակի վրա (ավելի լավ է և անվտանգ՝ կրակը վառել անհատակ դուլի մեջ, յերկու հոգի բռնում են գունդը նրա ցածի անցքի ողակից: Դրանցից մեկը բռնում է ղեկի վերևի մասը: Յերբ գունդ ամբողջապես լցվի տաք ոգով, բռնում են միայն ցածի ողից: Գունդը բաց է թողնվում այն ժամանակ, յերբ զգացվում է նրա դեպի վեր գնալու ձգտումը:

Զ Ր Ա Ն Ի Վ

Ձեզնից ո՞վ չի լսել և չգիտե մեր ջրաեղեկտրակայանների՝ Դնեպրոգեսի, Վոլխովգեսի, Զագեսի, Չորագեսի և ուրիշ ջրաեղեկտրակայանների մասին:

Այդ ջրաեղեկտրակայանները մեզ հսկայական եներգիա, ուժ են տալիս: Յեվ դեռ ինչքան ջրվեժներ, գետեր, լճեր կան, վորոնք մեզ շատ ու շատ եներգիա կտան, յերբ մենք նրանց տեխնիկապես մեզ յենթարկենք:

Ջրով, վորպես ուժի աղբյուրով, վաղուց և վոր մարդիկ սկսել են ոգտվել: Զանազան ժամանակներում, տարբեր յերկրներում կառուցվել են զանազան շարժիչներ—յերեք տեսակի անիվներ՝

1) Վերևից թափվող ջրով բանող անիվ.

2) Կողքից թափվող ջրով բանող անիվ.

3) Վարից հոսող ջրի ուժով բանող անիվ, վորոնք տարբերվում են ջրով աշխատելու իրենց ձևերով (տես նկ. 2, 3, 4):

Այդ ջրանիվները մինչև այժմ գործածվում են գյուղացիական անտեսուկ յուններում, ոգտագործելով ջրի ուժը:

Այդ ջրանիվներից ամենաձեռնատուն վերևից թափվող ջրով բանող անիվն է:

Ունենալ հետևյալ գործիքներ՝

Լորդիկ, ձեռնասղոց, բիգ, գայլիկոն, մուրճ, Խողանաստի վրձին:

Նյութ. Սովորական ֆաներ, յերկաթալար սոնակի համար, յուղաներկ կամ եմալի ներկ:


ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Փաների վրա ըստ № 5 գծանկարի, գծագրել յերկու իրար հավասար ջրջաններ: Անկյունաչափով բաժանել 12 (կամ 18, 24) հավասար մասերի 30-ական աստիճան:

Անվի մեծությունը կախված է ջրի քանակից (առվակ, վտակ):

Վորքան ուժեղ է ջրի ճնշումն, ախքան մեծ պետք է լինի անիվը:


Փաների վրա, յուրաքանչյուր ջրջանի մեջ գծագրվում են յերկու համակենտրոնական ջրջանագծեր, վորոնք նույնպես բաժանվում են 12 (18, 24) հավասար մասերի. ապա այդ բաժանումները միացվում են առաջին ջրջանագծի բաժանումների հետ մեջ ընդ մեջ: Ստացվում են մի շարք թեք գծեր (միևնույն անկյան չափով), վորոնք ցույց կտան մեզ աշխատող թիակների ամրացնելու տեղը: Հետո այդ գծերի ուղղությամբ լորդիկով ֆաների հաստության չափ կտրվածքներ են պրվում, վորոնց մեջ համապատասխան փայտե սեղիկներով ամրացվում են թիակները: Թիակները պիտի շինել սխալիս մեծությամբ, վոր դրվելով յերկու անիվների մեջ, րանք կպչեն իրար:



Յերբ պատրաստ կլենեն յերկու ջրջանները և թիակները, այդ առանձին մասերն իրար հարմարեցնել և կազմել մի մբողջ—ջրանիվ:

Պատրաստի ջրանիվը պետք է գեղեցկության և դիմացունելության համար ներկել յուղաներկով կամ եմալե ներկով և ամրացնել նույնպես ներկած յերկաթե սոնակին ու դնել ատվանդանի վրա:

Այդ անիվը կարող է աշխատել վերից, կողքից թափվող, նչպես նաև ցածից հոսող ջրի ուժով:



Տրանսպորտիրով բաժանել 12 հավասար մասերի (30°).

Ջրանիվը պտտվում է վերից թափվող ջրով.


Ջրանիվը պտտվում է վարից հոսող ջրով.

Ջրանիվը պտտվում է կողքից թափվող ջրով:

ՌԵԲՐՈՒՄ № 5.



ՌԵԲՐՈՒՄ № 6.



«Ուսման-հարվածային» № 2-ում տպված ռեբուսների լուծումը՝

Ռեբուս № 3. — 1932 թիվը հնգամյակը 4 տարում իրագործելու տարին է։

Ռեբուս № 4. — Ուսուցիչը աշակերտներին տանում է գրծարան կապ հաստատելու։

Խմբագրական կոլեգիա՝ Ն. Ավագյան, Յե. Զախարյան, Մ. Փիրումյան
Պատասխանատու՝ Խմբագիր Մ. Փիրումյան



2656

У—22

Отв. редактор
М. О. Пиюмьян
Техн. редактор
Г. М. Маркьян

Сдано в наб. 1/VIII 1932 г.
Сдано в печ. 31/VIII 1932 г.
Об'ем 4^{1/2} печ. листа
Тираж 2500 экз.

Уполкрайлита № 1705. Ростов н-Д. Газ.-кн. тип. СККПО Ст.-Форм. А5-148x210 Зак № 3964

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նոր ուսումնական տարին սկսենք կազմակերպված, Յե. Զախարյան	3
Լենինի պատգամը (բանաստ) Ա. Խաչենց	9
Միջազգային յերթասարդական որը՝ Մ. Փիրումյան	10
Ի՞նչ վորոշեց Հ. Կ. (բ) Կ. Կենտկոմը պիտենք կազմակերպության տա- նամյակի առթիվ՝ Յե. Զ.	14
Ընկ. Պիվովարովի ճանը պիտենք- ների յերկրային հավաքում	18
Թվերը խոսում են, Մ. Փիրումյան	23
Հասցը լավ է արագ հավաքել, քարզմ Գ. Մ.	30
Տրակտորը (բանաստեղծ) Կ. Ինյան	32
Ոգնենք կուսակցությանը և պետու- թյանը տարածելու նոր փոխառու- թյունը, քարզմ Մ. Գեվորգյանի	32
Կուսակցության առևտրի մասին	34
Կոլխոզի արտում, Կ. Ինյան	37
1905 թիվը Ռոստովում, քարզմ Յե. Զ.	37
Եներգիայի աղբյուրները, Ո. Զոհրաբյան	39
Վարակիչ հիվանդություններ, Հ. Բաբունի	53
Ինչպես և տպվում «Ուսման Հար- վածայինը», Հ. Մազմանյան	58
Ոգապարիկ, Ո. Բառաշյան	62
Ջրանիվ, Ո. Բառաշյան	66
Ռեբուսներ, Մովսիս	68


ՀՀ Ազգային գրադարան



NL0241848

ЖУРНАЛ - УЧЕБНИК

для III и IV группы
армянских школ I ст.



9870

цена 50 коп.

507

48 /
507 U

На армянском языке



И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ГР. № 26086

ПРИКАЗ-ПОР., ПЛОЧКАЗУЛ ФОР., 53

ГР. ЧЕЛСР. ЧЕЛ. ПОВЕЛСР